ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/17

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Վ. Պապյանի (լիազորագիր տրված՝ 03.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/718-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության 20.01.2021թ. թիվ 3/27/2258-2021 գրության հիման վրա 21.01.2021թ. թիվ 26/26/718-2021 գրությամբ նախաձեռնել է «Պահապան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պահապան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/17 ընթացակարգի շրջանակներում 03.02.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ տրամադրել 2 աշխատանքային օր ժամկետ՝ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

«Պահապան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԳՆ-2021/17 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով.

«ՀՀ Ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքված N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 պայմանագրով «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է արտադրելու և գնման ժամանակացույցի համաձայն՝ ՀՀ ոստիկանությանը մատակարարելու 860 հատ գլխարկներ, 430 հատ կոստյումներ և 1720 հատ վերնաշապիկներ: 860 հատ գլխարկները, 430 հատ կոստյումներն ըստ գնման ժամանակացույցի՝ արտադրվել և մատակարարվել է գնորդին, իսկ 1720 հատ վերնաշապիկները չեն արտադրվել ու մատակարարվել հետևյալ պատճառներով.

«Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշման համաձայն՝ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին»»:

2020թ. մարտ ամսից մինչև օրս «Պահապան» ՍՊԸ-ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով, բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1

աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են Ռուսաստանից, Բելոռուսից, Թուրքիայից և այլն: Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները:

Բացի նշված պայմանագիրը, «Պահապան» ՍՊԸ-ն կնքված տասնյակ այլ պայմանագրեր ունի նաև այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային պայմանների պատճառով այդ պայմանագրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչընդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

Այդ դժվարություններին ավելացել է նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ: Սեպտեմբերի 27-ից մինչև պատերազմի ավարտը՝ նոյեմբերի 9-ը «Պահապան» ՍՊԸ-ն կասեցրել է բոլոր պայմանագրային պարտավորությունները, այդ ընթացքում միմիայն զբաղվելով հայկական բանակի համար համազգեստի, վրանների, քնապարկերի արտադրությամբ ու առաջնագիծ մատակարարմամբ, որի պատճառով խախտվել են ոչ միայն սույն, այլև այլ գերատեսչությունների հետ կնքված տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված մատակարարումների ժամկետները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ,

եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 պայմանագրի 7-րդ կետով սահմանված է՝ «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել.....»:

Ֆորս-մաժորային իրադրության պատճառով է միայն 2020թ. դեկտեմբեր ամսվա սկզբներին Հայաստան հասել N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 պայմանագրով նախատեսված 1720 հատ վերնաշապիկների արտադրման համար անհրաժեշտ և ամիսներ առաջ պատվիրված գործվածքեղենը և կարի համար նախատեսված թելերը: Քանի որ, վերնաշապիկների մատակարարման վերջնաժամկետը մոտենում էր ավարտին, 09.12.2020թ. N Պ-065 գրությամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալին գրավոր ներկայացվել է ստեղծված ֆորս-մաժորային իրադրությունը, հայտնվել է, որ անհրաժեշտ գործվածքը արդեն ստացվել է և խնդրվել է տրամադրել ևս 30 օր՝ վերնաշապիկները ամբողջությամբ արտադրելու և մատակարարելու համար, պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտության դեպքում տրամադրելու համապատասխան բանկային երաշխիք: Մինչև 18.01.2021թ. սույն գրությանը որևէ պատասխան չի տրվել, մեզ պահելով անորոշության մեջ: Միայն 18.01.2021թ. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունից ստացել ենք ծանուցում 1720 հատ վերնաշապիկների մասով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին: Տարօրինակ է, որ մեր հիշյալ գրությունից 40 օր հետո է լուծվել պայմանագիրը, այն դեպքում, երբ մենք խնդրել էինք տրամադրելու ընդհամենը 30 օր: Եթե տրամադրվեր նշված 30 օրը, ապա դեռևս պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից առնվազն 10 օր առաջ մենք ամբողջովին արտադրած և մատակարարած

կլինեինք 1720 հատ վերնաշապիկները: Այս հանգամանքը փաստում է այն մասին, որ ՀՀ ոստիկանությանը առանձնապես չի հետաքրքրել հիշյալ վերնաշապիկները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է, հաշվի առնելով «Պահապան» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.01.2021թ. թիվ 3/27/2258-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11 մայիսի 2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել՝ չի մատակարարել պայմանագրով սահմանված 1720 հատ վերնաշապիկ սպիտակ երկարաթև, որի ընդհանուր գումարը կազմում է 8 256 000 ՀՀ դրամ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/17 ընթացակարգի շրջանակներում 03.02.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1720 հատ վերնաշապիկի /վերնաշապիկ ե/թ սպիտակ/ 8 256 000 ՀՀ դրամ ընդհանուր գնով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո /20 օրվա ընթացքում՝ 430 հատ, 80 օրվա ընթացքում՝ 430 հատ, 170 օրվա ընթացքում՝ 430 հատ, 260 օրվա ընթացքում 430 հատ/ բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

3. Պայմանագրի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17 110 260 ՀՀ դրամ:

4. «Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 18.01.2021թ. թիվ ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել՝ չի մատակարարել պայմանագրով սահմանված 1720 հատ վերնաշապիկ սպիտակ երկարաթև, որի ընդհանուր գումարը կազմում է 8 256 000 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում, Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի

միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքված Պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 18.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/718-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 20.01.2021թ. թիվ 3/27/2258-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Պահապան» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1720 հատ վերնաշապիկի /վերնաշապիկ ե/թ սպիտակ/ 8 256 000 ՀՀ դրամ ընդհանուր գնով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո /20 օրվա ընթացքում՝ 430 հատ, 80 օրվա ընթացքում՝ 430 հատ, 170 օրվա ընթացքում՝ 430 հատ, 260 օրվա ընթացքում 430 հատ/ բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17 110 260 ՀՀ դրամ:

«Պահապան» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 09.12.2020թ. թիվ Պ-065 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պահապան» ՍՊԸ-ն 11.05.2020թ. Պայմանագրով պետք է մատակարարեր երեք անուն հանդերձանքներ, որից երկու հանդերձանքները ժամանակին և որակով արտադրվել ու մատակարարվել են, իսկ 1720 հատ վերնաշապիկ ե/թ սպիտակ չենք հասցրել արտադրել և մատակարարել, քանի որ տարվա ընթացքում մեր կողմից մրցույթով շահած տարբեր պայմանագրերով վերնաշապիկների արտադրությունը և մատակարարումը դադարեցվել է Ձեր կառույցի կողմից պահանջարկ չլինելու պատճառով և մենք ամիսներ շարունակ սպասում էինք վերը նշված պայմանագրի վերնաշապիկիների ճակատագրին: Պարզելով, որ 1720 հատ վերնաշապիկները Ձեզ անհրաժեշտ են, անմիջապես ՌԴ մեր մատակարար ձեռնարկությանը պատվիրել ենք և վճարումը իրականացրել, բայց բոլոր տեսակի գործվածքների համար արտադրող ձեռնարկությունները 60-ից 90 օր են պահանջում նորմալ պայմանների դեպքում, իսկ այս տարվա կորոնավիրուսի հետ կապված թե մեզ մատակարար ձեռնարկությունները և թե մեր ձեռնարկությունը աշխատել է արտադրական կարողության 15-ից 20%-ի չափով, մշտապես ունեցել ենք կորոնավիրուսով վարակվածներ և երկար ժամկետներով Ընկերությունը գտնվել է մեկուսացման մեջ, որի պատճառով արտադրվող և մատակարարվող մի շարք համազգեստներ գրաֆիկից հետ են ընկել, իսկ Արցախյան պատերազմի ժամանակահատվածում համապատասխան ցուցումի համազգեստ է արտադրվել երեք հերթափոխային աշխատանքով և մատակարարվել է առաջին գիծ: Գործվածքը ներկա փուլում մեծ դժվարությամբ ստացել ենք, բայց 1720 հատ վերնաշապիկ արտադրելու համար որոշակի ժամանակ է հարկավոր, ուստի խնդրում ենք հնարավորություն ընձեռել 30 օրվա ընթացքում վերը նշված վերնաշապիկները արտադրել և մատակարարել, անհրաժեշտության դեպքում համապատասխան բանկային երաշխիք մեր կողմից կտրամադրվի»:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 18.01.2021թ. թիվ ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել՝ չի մատակարարել պայմանագրով սահմանված 1720 հատ վերնաշապիկ սպիտակ երկարաթև, որի ընդհանուր գումարը կազմում է 8 256 000 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 11.05.2020թ. կնքված Պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 18.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/17 ծածկագրով ընթացակարգի շրջնակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ երկրում տիրող ֆորս-մաժորային իրադրության պատճառով Պայմանագրով նախատեսված 1720 հատ վերնաշապիկների արտադրման համար անհրաժեշտ և ամիսներ առաջ պատվիրված գործվածքեղենը և կարի համար նախատեսված թելերը Հայաստան են հասել 2020թ. դեկտեմբեր ամսվա սկզբներին: Քանի որ վերնաշապիկների մատակարարման վերջնաժամկետը մոտենում էր ավարտին, Ընկերությունը 09.12.2020թ. թիվ Պ-065 գրությամբ ՀՀ ոստիկանությանը ներկայացրել է ստեղծված ֆորս-մաժորային իրադրությունը և հայտնել է, որ անհրաժեշտ գործվածքը արդեն ստացվել է և խնդրել է տրամադրել ևս 30 օր՝ վերնաշապիկները ամբողջությամբ արտադրելու և մատակարարելու համար՝ պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտության դեպքում տրամադրելու համապատասխան բանկային երաշխիք: Սակայն ՀՀ ոստիկանությունը 18.01.2021թ. գրությանը որևէ պատասխան չի տվել՝ Ընկերությանը պահելով անորոշության մեջ: Միայն 18.01.2021թ. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունից Ընկերությունը ստացել է ծանուցում՝ 1720 հատ վերնաշապիկների մասով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/17 ծածկագրով ընթացակարգի շրջնակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է

տրամադրել 07.12.2020թ. սինթետիկ գործվածք պոլիվինիքլորիդե պատվածքով և 12.12.2020թ. կարի բամբակյա թել արտադրության համար ապրանքների ներմուծման հայտարարագրերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ, համաձայն 11.05.2020թ. կնքված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի, Ընկերությունը, համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, պարտավոր էր մատակարարել՝ 1720 հատ վերնաշապիկ /վերնաշապիկ ե/թ սպիտակ/ 8 256 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որոնք Ընկերության կողմից չեն մատակարարվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը և դրանք համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, ինչպես նաև Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները՝ գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ Ընկերությունը ՀՀ-ում ստեղծված իրավիճակում, այն է՝ Covid-19 համավարակի արդյունքում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը պատշաճ կատարելու հնարավորությունից***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/718-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**